

# ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

վայրը \_\_\_\_\_

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները  
այսուհետ՝ «Փոխատու», ի դեմս՝ \_\_\_\_\_, որը գործում է \_\_\_\_\_  
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և \_\_\_\_\_,  
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները  
այսուհետ՝ «Փոխառու», ի դեմս՝ \_\_\_\_\_, որը գործում է \_\_\_\_\_  
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Փոխատուն պարտավորվում է Փոխառուի ժամանակավոր անհատույց օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը, իսկ Փոխառուն պարտավորվում է վերադարձնել այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

1.2. Փոխատուն Փոխառուի ժամանակավոր, անհատույց օգտագործմանն է հանձնում \_\_\_\_\_,  
գույքի նկարագրությունը

այսուհետ՝ «Գույք»:

1.3. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Փոխատուին:

1.4. Գույքի հանձնումը ձևակերպվում է հանձնման-ընդունման ակտով, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխատուն իրավունք ունի՝

2.1.1. Փոխառուից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2. Գույքն օտարել երրորդ անձի: Ընդ որում, նոր սեփականատիրոջն են անցնում սույն պայմանագրով նախատեսված Փոխատուի իրավունքները, որը սակայն հիմք չէ սույն պայմանագրի լուծարման համար.

2.1.3. Փոխառուից պահանջել կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.2. Փոխատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո \_\_\_\_\_ օրվա ընթացքում.

2.2.2. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.3. Գույքը հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.4. Փոխառուին տեղյակ պահել Գույքի թերությունների, ինչպես նաև Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին:

2.3. Փոխառուն իրավունք ունի՝

2.3.1. պայմանագիրն ստորագրելուց \_\_\_\_\_ օր հետո պահանջել Փոխատուից հանձնելու սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը՝ դրա բոլոր պատկանելիքներով և փաստաթղթերով.

2.3.2. Փոխատուի կողմից Գույքի թերությունների մասին չհայտնելու դեպքում, պահանջել անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3. Գույքը երրորդ անձի օգտագործմանը հանձնել միայն Փոխատուի համաձայնությամբ:

2.4. Փոխառուն պարտավոր է՝

2.4.1. Գույքը պահպանել սարքին վիճակում.

2.4.2. կատարել Գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը.

2.4.3. Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան.

2.4.4. կատարել Գույքի ընթացիկ և հիմնական վերանորոգումը.

2.4.5. Գույքը վերադարձնել Փոխատուին՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված վիճակում:

## 3. Պայմանագրի վաղաժամկետ լուծարումը

3.1. Փոխատուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե Փոխառուն՝

3.1.1. Գույքն օգտագործել է պայմանագրին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

3.1.2. չի կատարել Գույքի պահպանման պարտականությունները.

3.1.3. էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

3.1.4. առանց Փոխատուի համաձայնության Գույքը հանձնել է երրորդ անձի.

3.2. Փոխառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե՝

3.2.1. հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք Գույքի բնականոն օգտագործումը դարձնում են անհնար և որոնց մասին ինքը չգիտեր ու չէր կարող իմանալ պայմանագիրը կնքելիս.

3.2.2. Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի այնպիսի հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում.

3.2.3. Փոխատուն չի կատարել Գույքը կամ դրա պատկանելիքները հանձնելու իր պարտականությունը.

3.3. Սույն պայմանագիրը դադարում է նաև փոխառու քաղաքացու մահվան դեպքում:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Փոխառուն կրում է անհատույց օգտագործման հանձնված Գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե դա կատարվել է Գույքի նշանակությանն անհամապատասխան օգտագործելու հետևանքով, կամ սույն պայմանագրի պահանջների խախտմամբ:

4.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմեր իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Պայմանագրի գործողության ժամկետը**

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից սկսած և գործում է մինչև \_\_\_\_\_թ.:

6.2. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

**7. Վեճերի լուծման կարգը**

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

**8. Այլ պայմաններ**

8.1. Փոխատուի մահվան (վերակազմակերպման) դեպքում սույն պայմանագրով Փոխատուի իրավունքները և պարտականություններն անցնում են ժառանգին (իրավահաջորդին):

8.2. Փոխատուի վերակազմակերպման դեպքում Փոխատուի իրավունքները և պարտականությունները սույն պայմանագրով անցնում են իրավահաջորդին:

**9. Եզրափակիչ դրույթներ**

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

*Փոխատու*

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ստորագրություն

*Փոխատու*

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ստորագրություն